Մոտ կես ժամի չափ տևում է շքերթը տաճարից դեպի Վեհարանի դարպասը, որտեղ Վեհը շրջվելով օրհնում է հավատացյալ ժողովրդին։

Շարունակվում է հայ ժողովրդի հին ավանդական սովորությունը։ Տղա-աղջիկ ձեռք ձեռքի տված՝ յայլիներով ու երգերով թընդացնում են օդը։ Մերունիները կանգնած, դիտում են երիտասարդների ճարպիկ շարժումները, մտաբերելով իրենց ջահելությունը և հրճվում։

Շատ ուշ, ժողովուրդը ցրվում է։

ՍԱՐԿԱՎԱԳ

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԻ ՕՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

1950 թվի մարտի 12-ի օրը ոսկե տառերով կարձանագրվի պատմության մեջ։ Այդ օրը կհիշվի որպես Սովետական Միության երջանիկ աշխատավորների համաժողովրդական տոնի օր։

Ավելի քան երկու ամիս, ամբողջ Սովետական Միությունում, նախապատրաստական աշխատանքներ էին տարվում, պատվով ու փառքով դիմավորելու ՍՍՌՄ Գերագույն Սովետի ընտրությունները։ Ժողովուրդը պատրաստվում էր ընտրելու կառավարական իր բարձրագույն օրգանը։ Առաջադրվում էին թեկնածուներ Միութենական և Ազգությունների Սովետների համար։ Աշխատավորները մեծ խանդավառությամբ էին դիմավորում թեկնածուների առաջադրությունը։

Ամբողջ երկիրը եռուզեռի մեջ է, ամենուրեք պատրաստվում են, ամենուրեք սպասում ընտրության օրվան։

ՍՍՌՄ Գերագույն Սովետի ընտրություններին լավ են նախապատրաստվել բոլորը։ Լավ էին նախապատրաստվել նաև Ս. Էջմիածնի Մայր Աթոռի միաբանությունը և Հ. Ճեմարանի ուսանողությունը։

Ընտրությունները սկսվելուց առաջ, միաբանությունը և ուսանողությունը ծանոթացել էին Գերագույն Սովետի ընտրությունների կանոնադրության և առաջադրվող թեկնածուների անձնավորության հետ։

Եկավ վերջապես մարտի 12-ի բաղձալի օրը։ Առավոտյան ժամը 6-ն է։ Յուրաքանչյուր ոք ուզում է ինքը առաջինը ընտրել, առաջինը քվեատուփի մեջ իջեցնել ընտրական թերթիկները։

Լսվում են մայրաքաղաքի ժամացույցի հեց ուժգին զարկերը։ Պետական հիմնի նշյունների տակ սկսվում է ընտրությունը, ուրախ նվագում է նվագախումբը։

Երևանի աշխատավորները, ինտելիգենցիան, բոլորը մեկը մյուսի հետևից, պարտքի գիտակցությամբ մոտենում են քվեատուփերին։ Նրանք զգում են իրենց կատարած գործի մեծությունը և պատասխանատվությունը։ Ամենուրեք լսվում են ուրախության ձայներ, երգի ու պարի, հրճվանքի աղմուկ։ Ուրախ է մեր ժողովուրդը, ուրախ՝ որ ընտրում է իր բարձրագույն օրգանը։

Ժամը 6-ից սկսվել են ընտրությունները էջմիածնում։ Ամենուրեք տիրում է կարգապահություն, ամենուրեք ուրախություն է ու հրճվանք։

Ժամը 11-ին հնչում են Մայր Աթոռի Տաճարի զանգերը։ Օդը լցվում է զանգահարության ախորժելի թրթռոցով, որը տարածվում է հեռո՜ւ, շա՜տ հեռու։

Սկսվում է Ս. Պատարագը։ Ներկա է Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսը։ Տաճարը լիքն է խուռներամ բազմությամբ։

Պատարագից հետո, Վեհարանի բակում հավաքվում են Մայր Աթոռի միաբանությունը, Հ. Ճեմարանի ուսանողությունը, Ճեմարանի ռեկտորը, վերակացուները և ուրիշները, որոնք բոլորն էլ անհամբեր սպասում են Վեհի իջնելուն։ Բոլորը հագել են իրենց տոնական զգեստները մաքուր, կոկիկ։ Քահանաները ու վարդապետները գցել են իրենց լանջախաչերը և կազմ ու պատրաստ սպասում են վեհին։

Ահա իջնում է Վեհափառը։ Թափորը ճամբա է ընկնում։ Կարճ տարածություն անցնելուց հետո, արդեն երևում է էջմիածնի ընտրական օկրուգի ընտրական տեղամասի շենքը, զարդարված պլակատներով, լոզունգներով և առաջնորդների նկարներով։ Թափորը տեղ հասնելով, կանգ է առնում շենքի դռների երկու կողմերում։ Վեհը, հայրապետական սան ձեռքին, մտնում է ընտրական տեղամասի շենքը։ Նրա դեմքը այսօր հուզումնալից է։ Մուտքի մոտ, նրան ողջունում են ընտրական հանձնաժողովի անդամները։ Բարձրանում է Վեհը ատիճաններով։

Բոլորը արդեն վերևումն են։ Բոլորը ստանում են ընտրական թերթիկներ և գնում են դեպի քվեատուփը։ Առաջինը քվեատուփին է մոտենում Վեհափառը. նույն րոպեին նկա-

րում են նրան։ Սպասում է մի բոպե Վեհը։ Նա զգում է վայրկեանի վեհությունը։ Նա գիտե, որ այսօր, սովետական ժողովուրդը իր ձայնը տալով իր ընտրելիներին, ապահովում է խաղաղությունը համայն աշխարհում, մի գործ՝ որի գլուխն է անցել խաղաղության հզոր պատվար՝ Սովետական Միությունը։

Այսօր հայ հոգեվորականը իր իրավունքների լիիրավ տերն է։ Նա կատարում է իր քաղաքացիական սրբազան պարտքը։

Բոլորը դուրս են գալիս նույն կարգով, Բաթիորը շարժվում է առաջ։

Զանցած մի քանի օր, բարձրախոսը հայտարարում է. «Սովետական Երկրի բոլոր

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. քվեատուփի մոտ մի խումբ միաբանների հետ

Նա գիտակցում է, որ այնքան թանկ գնով ձեռք բերած խաղաղությունը աշխարհի ժողովուրդները կպահեն իրենց ձեռքում։

Գցում է Վեհը թերթիկը քվեատուփի մեջ և օրհնում։ Գալիս են իրար հետևից միաբանները, ուսանողները, բոլորը ըստ կարգի ու աստիճանի։ Հայ հոգեվորականը լավ է գիտակցում, որ այսօր, առավել քան երբեք, պաշտպանված են իր շահերը, իր բարեխնամ կառավարության կողմից։ Միայն Սովետական Միության մեջ է որ ընտրությունները կատարվում են առանց ազգության, կրոնի և ռասայական խտրությունների։

ընտրողների 99,98 տոկոսը մասնակցել է ընտրություններին։ Միության Սովետի դեպուտատների ընտրություններին մասնակցած ընտրողների 99,73 տոկոսը և Ազգությունների Սովետի դեպուտատների ընտրություններին մասնակցած ընտրողների 99,72 տոկոսը ձայն տվին կոմունիստների և անպարտիականների ստալինյան բլոկի թեկնածուների օգտին»։

Ուրախությունը կատարեալ է։ Երկիրը ընտրել է կառավարական իր բարձրագույն օրգանը՝ ՍՍՌՄ Գերագույն Սովետը։